

մեծագործ ապարանները և կալուածները ունեն
վաստութեան նահանգին (Ստոնիւնեաց գաւառին
Ստոնիւն աւանին մօտ) Սահաւալու գիւղին մէջ¹ :
Այս վարդապետիկ նախարարի տակաւին ուրիշ
չառ մեծութիւնները և առաքինութիւնները պատ-
մուած են զանազան ժամանակակից և յետին դա-
րու պատմիչներէն :

Այս երեւելի նախարարի սերունդներէն են
հիմաւու Հայաստանին ան ականաւոր գերդաստան-
ները որ մինչեւ ցայսօր կը գտնուին Սարգստանու
և Կեսարիոյ զանազան կողմերը² և մինչեւ ցայսօր
իրենց ազնուատոհմութեան նշանները կ'իրեւան ի-
րենց վրայ և մինչեւ հիմա գերդաստաններու մակա-
նունն ալ իրենց վարդապետիկ նախնայն անուանող
կը յիշուի տաճկերէն բառական թարգմանութեւ,
վասն զի վարդ³ տաճկերէնէն է կիւլ, և պատրիկ կը
թարգմանուի պէլ, որով գերդաստաններու անունն
ալ ըսուած է կիւլ-պէլ⁴ օր-լուր, այս բանը շատ
գերդաստանաց անուններու վրայ կը տեսնուի, որ
լեզուներն փոխուած կամ հայերէն լեզուներն կորսն-
ցուներով ուրիշ լեզուի յարած ժամանակներն սե-
րունդներն ալ չի կորսնցուցուց իրենց համար, ինչ լե-
զուի որ յարեցան նէ մականուններն ալ այն լեզուին
յարմարած են, ինչպէս այս գերդաստաններս ալ
որ հիմա գրեթէ բնաւ հայերէն չեն գիտեր :

Այս տոհմէս սերած գերդաստանները որ Կե-
սարիոյ թաւալս գիւղին մէջ կը բնակին, և գիւղիս
երեւելի գերդաստաններուն մեծ մասը այս անու-
ւածք կը յիշուի միշտ կը ջանան որ ինչպէս որ սե-
րունդով մէկ են հաշուաւոր նախնիներնուն հետը
նէ⁵ մեծագործութեամբ և հայրենասիրութեամբ
ալ մէկ ըլլան, և որովհետեւ այսօրուան օրս ալ
ազգին մանկունքները կանոնաւոր դաստիարակու-
թեան ճամբան խօթելէն անդին մեծ ծառայութիւն
կամ մեծագործութիւն ըրած չեն կրնար ըլլալ ազ-
գին, անոր համար առ խորհուրդներին օրբազան
առաջնորդին և ուրիշ երեւելեաց առջին բացած
ժամանակներ երբոր անոնցմէ ալ խրախոյս տաին,
մանաւանդ որ այսօրուան օրս բոլոր ազգն ալ ազ-
գին յառաջագործութեանը մի միայն միջոց դաստի-
արակութիւնն ու կրթութիւնը կամ ուսումն և
գիտութիւնը ճանչցած է, անոր համար իրենց ար-
դար վաստակովը երեւելի վարժարան մը չենցնին
թաւալս գիւղին մէջ և չափաւոր ալ եկամուտ կա-
պեցին ի յիշատակ իրենց ազնուատոհմութեանը և
անչափ հայրենասիրութեանը⁶ : Այս այս մեծագոր-
ծութիւնս իրենց ճշմարիտ հայրենասիրութեանը և
ուսումնասիրութեանը անեղծական արձան մը և
անջնջելի յաւեւ ժաշկան յիշատակ մը, միանգամայն
ուրիշներուն ալ իրենց տոհմերուն անունները յա-
ւեւ ժաշկներու խրախոյս մը և միջոց մը ըլլալու հա-
մար քաջ խորհրդով անունը գրին տոհմերուն ան-
ունամբը վարդապետիկեան վարժարան (կիւլ-պէլ
զապէ միւլ-պէլ) որ է քարուկի որ հոյակապ և յու-
սանք որ ներքին շքեղութիւնը քան զարտաքինը կը
գերազանցէ, այսինքն բուն նպատակը քան զէնքը⁷ :

Այս վարժարանիս պատճառաւ ալ ինչպէս յա-
ռաջ ըսինք, բոլոր Կեսարիոյ նահանգին երեւելի-
ները ընդհանուր ընկերութիւն մը կազմեցին որ ա-
մէնուն ուժը մէկ տեղ բերեն և հիմաւու հիմա մի-
այն այս վարժարանս կառավարեն, և որովհետեւ
այսչափ մեծ նահանգ մը միայն այս վարժարանովս
չի կրնար բաւականանալ, անոր համար ուրիշ պէտք
եղած տեղերն ալ մեծ ու պղտիկ թէ վարժարաններ
և թէ ուրիշ ազգագրական գործեր եկեղեցիներու ե-
տեւէ ըլլան ընկերութեանս պաշտպանութեանը
տակը :

Այս ընկերութեան անունը ինչպէս ըսինք (Սա-
միկոնեան ընկերութիւն է, մեր Սամիկոնեան հրա-
չակաւոր նախարարութեան անունամբ, որոնք թէ
Արշակունեաց թագաւորութեան ժամանակը և
թէ անոր վերնախնէն ետեւ իրենց քաջութիւններու
վը և մեծագործութիւններով ազգին փառք ու պար-
ծանք եղան : Սամիկոնեաններուն մեր ազգին բոլոր
նախարարութիւններէն և քաջազարմներէն ալ ա-
ւելի ազգին թէ բարոյական և թէ աշխարհական
զարգացմանը թեւ թիկունք ըլլալին էր որ կեսա-
րացիները ցանկացող իրենց մի միայն ընկերու-
թեանը անունը Սամիկոնեան ընկերութիւն գրեց,
մանաւանդ լուսահոգիի մը առ խօսքն իրենց և ի
Սամիկոնեանս սերնդեամբ գտանէին տպաւորեալ
սկզբունք գովելի բարոյականութեւ, և բնական իմն

յօժարութիւն և յարմարութիւն ի կրթել զմանկունս ի հը-
րահանգս բարի քաղաքավարութեւ, ոչ միայն իւրեան-
ցն, այլ և զայլոցն, և զայս ոչ միայն յարս էր տե-
սանել այլ և ի կանայս նոցա ։ Կեսարացւոց ալ
միմիայն ցանկացածը այս կարճ խօսքիս մէջը պարու-
նակուածները ըլլալով Սամիկոնեանց անունամբը
կ'ուզեն անոնց վեւմ ոգին իրենց վրայ նորոգել, և
հիմա որ Կեսարիոյ շատ գիւղերուն մէջ շատերը
մինչեւ իրենց հայրական լեզուին ալ անծանօթ կը
տեսնեն նէ, ժամանակէ մը ետեւ իրենց աստուա-
ծային գովելի բնիկ լեզուէն զատ զանազան լեզու-
ներ ալ խօսող և զանազան գիտութիւններու ալ
տեղեակ Սամիկոնեաններ յարուցանել. նախնի Սա-
միկոնեանները որ իրենց բնատուր քաջութիւննե-
րով և արիւնքութիւններովը հայրենի իշխանութիւն-
նուս յարատեւութեանը և զարգացմանը պաշտ-
պաններ յարուցին նէ, ինչպէս են Վաչէ, Արտա-
ւազդ, Սանուէլ, Կոմս, Վարդան, Վահան,
Վարդ, Համադաս, Գրիգոր և այլն : Ասանկ ալ
կեսարացիք կ'ուզեն անոնց անուանը կառուցուած
ընկերութեամբ մը տասն և իններորդ դարուս մէջ
կամ անոնցմէ հազարաւոր տարիներ ետքը յարու-
ցանել Վաչէներ, Արտաւազդներ, Սանուէլներ,
Կոմսներ, Վարդաններ, Վահաններ, Վարդեր,
Համադասներ Գրիգորներ և այլն, որ ուսմամբք և
գիտութեամբք ուսնացած և աճած անոնցմէ շատ
մեծ քաջութիւններ և արութիւններ ընեն, անոնց
պէս միանգամայն նիւթականին և բարոյականին
համար միատեղ աշխատելով ան վեւմ անունը կրե-
լու արժանաւորութիւններուն պակար զգայիներու
նէս ընդունին, ազգը ուսմամբք և գիտութեամբք
հարստացունեն և Հայաստանը անոնց հասուցած
վիճակին չի կրնան հասցունել ալ նէ գոնէ ձեռքեր-
նէն եկած ջանքը և միջոցները ձեռք բերած գլու-
նուին, հայրենի միակ լեզուներն պաշտպանեն, Կե-
սարիոյն ուսմանց, գիտութեանց, արուեստից և
ամենայն ազգային կատարելութեանց կողմանէ ի
կատար հասցունեն և սերնդով ըսուած անունամբ
իրենց թափանցել տալով, Կեսարիոյ այս կողմանէ
նախնիս ստացած փառքը կրկին նորոգեն Կեսարիոյ
մանաւանդ Հայաստանի մէջ, որ Սիւրբաղի Սա-
քարիսի մը հազարաւոր տարիներով յառաջ ձու-
նառանի մէջ տեսածին պէս, հիմա ալ ուրիշ Կե-
սարիոյն կարող ըլլան Կապագովիկայի մա-
նաւանդ Հայաստանի սահմաններուն մէջ տեսնել
Կարեստիաներ, Երեւորիաներ ու Որեաներ և այլն,
անոնց մէջի ամէն մէկ պարճանքներովը, որոնք որ
ոչ ուրիշ բանով կ'ըլլայ այլ միայն անմասնութեան և
ճարտարութեան և նախանձով ինչպէս յառաջ խօ-
սեցանք, որուն պիտի յառաջ պէտք ըլլալը ու-
սումնականութիւնն է, և այս ուսումնականութեւ
ալ ծնողքը Սամիկոնեան ընկերութիւնը պիտի ըլ-
լայ :

Այս ընկերութիւնս այս տարի յունվարի 1 ին
սկսեալ ազգային կրկին ժողովոց տնօրէնութեամբ
բը և կը շարունակէ իր նպատակին հասնելու մի-
ջոցները միշտ ի գործ դնելու ետեւէ ըլլալով : Այս
ընկերութեան հրատարակութեւ քիչ մը յապաղե-
լուս համար իրաւ համազգիք շատ օրիտի ցաւին,
բայց զանազան արգելքները գիտեն որ միշտ սովը
րական է այսպիսի ազգագրական գործերը ուսնողնե-
լու, որ և իցէ, ահա այսօր ընկերութիւնը ըստ բա-
ւոյանին ամէն բան կարգին դրած ըլլալով քիչ
շատ բոլոր համազգեաց ալ ձեռնտուութեւ կ'ըլ-
պասէ : Սամիկոնեան ընկերութեան և Վարդապետ-
րիկեան վարժարանին կանոնադրութիւնն ալ տըր-
ուեցաւ և հրատարակուեցաւ տաճկերէն և հա-
յերէն զատ զատ տեւորակներով կեսարացի Սա-
նուկեան մեծապատիւ Սահտեսի Սանուկ աղային
ծախիւքը որ Կեսարիոյ վիճակական ժողովոյն ան-
գամ է : Ընկերութեանս և վարժարանիս կարգին
կանոններն և ամէն մէկ պարագայներուն վրայօք տե-
ղեկութիւն ստանալ ուղղող կրնայ տեւորակներէս
աւանել :

Այս ընկերութեանս և վարժարանիս վերջին
նպատակը հասկնալ ուղղող բաւական է որ տեւ-
րակներուս սկիզբը անոնց բնաբանը տեսնէ : Ընկե-
րութեան բնաբանն է Լիւիշէ վարդապետին աս
խօսքը թէ « Օգուգութիւնն է մայր բարեաց, և ան
զուգութիւնն ծնող չարեաց ։ Իսկ վարժարանին
համար բնաբանն որոշուած է Սիրաք իմաստունին
ան խօսքը թէ « Ի մանկութեան քուժ ընտրես
զուսումն, և մինչեւ ի ծերութիւն գտանես զճան-
ճար . . . յամենայն մտաց մտաքի գու առ նա,
և յամենայն զօրութեան օրհնէ օրհնէ զճանապարհս նո-
րա . . . և ի վախճանի գոյցես վճանքիստ նորա ։ »
Թէ որ տեղը հասցունէ ասոնց ընդարձակադէպ
բացատրութիւնները և խորհրդածութիւնները պի-
տի կարգան մեր ընթերցողները ան երկու ճառե-
րուն մէջ, որոնք զատ զատ այս խօսքերս իրենց բը-
նաբան ունենալով գրուած են, մէկը սիրոյ և մի-

աբանութեան վրայ, միւսը ուսման և գիտութեան
վրայ որոնք են մի միայն նպատակ Սամիկոնեան ըն-
կերութեան :

Ընկերութեանս առաւել արդիւնաւոր և ընդար-
ձակ ըլլալու համար երկու խորհրդարան ունի մե-
կը Կեսարիա և մէկը Կոստանդնուպոլիս : Ընկերու-
թեանս նախագահը Կոստանդնուպոլիս պիտի ըլլայ
և Կեսարիա փոխանորդ մը պիտի ունենայ : Այսա-
գահէն և նախագահի փոխանորդէն ի զատ քսանը
չորս ալ խորհրդական անդամ պիտի ունենայ, որոնց
տասուերկուքը Կեսարիա պիտի ըլլայ և տասուերկ-
ուքը Կոստանդնուպոլիս : Ասոնցմէ զատ գործա-
կալներ պիտի ունենայ ընկերութիւնը Օմիւռնիա,
Լիւանա, Թիւրքիս և այլն, բոլոր կեսարացի գտնուած
քաղաքները որ օր աւուր ընկերութեան ստորագ-
րուողները շատնան :

Կոստանդնուպոլսյ խորհրդարանը բաղկացնող
նախագահին և տասուերկու խորհրդականներուն
անուններն են .

Յովհաննէս աղա Կարապետեան Սիւստեանց,
նախագահ :

Թաւիթ աղա Սեթեան .
Գէորգ աղա Խափամաճեան .
Յարութիւն աղա Սոմաճեան .
Բրիտտոստուր աղա Ղազարոսեան :
Սիրոյ աղա Ղաթմի .
Սահտեսի Սարահամ աղա Սողբերեան .
Սենեքերիմ աղա մահտեսի Սանուկեան .
Յովհաննէս աղա Կիւմլիշեան .
Յակոբ աղա Պէլլեբեան .
Յովհաննէս աղա Քաղիմայեան .
Յարութիւն աղա Քալաքաճեան .
Յարութիւն աղա Կուտեմեան . գանձապետ :
Կեսարիոյ խորհրդարանը բաղկացնող նախագա-
հի փոխանորդին և տասուերկու խորհրդականնե-
րուն անուններն են :

Սահտեսի Պօղոս աղա Սէրեան, փոխանորդ
նախագահ :

Սահտեսի Սեթեան աղա Կիւլպէկեան՝ ներքին
տեսուչ

Սահտեսի Սանուկ աղա Սանուկեան .
Սահտեսի Կիւլապի աղա Կիւլպէկեան .
Յովհաննէս աղա Թիւրապեան .
Սահտեսի Սարահամ աղա Ստամպոլլուեան .
Սահտեսի Քաթար աղա Քաթարեան գան-
ձապետ :

Յովհաննէս աղա Սէրեան . արտաքին տեսուչ .
Ստեփան աղա Թիւրապեան .
Սահտեսի Գրիգոր աղա Կիւլպէկեան .
Սահտեսի Կիւլպէկ աղա Կիւլպէկեան .
Սահակ աղա Սալեան .
Սարտիրոս աղա Պալեօգեան .
Յիրաւի ի վերջոյ Կեսարիոյ այս ամէն յառաջա-
գործութիւններուն մէջ մեծապէս նաեւ խոստովա-
նելի է արքունի ճարտարապետ գերապատիւ ամի-
րայններուն, և անոնց բոլոր պարագայներուն ջանքը
և ձեռնտուութիւնը, որ ըստ մեծի մասին կեսա-
րացի ըլլալով և մեծաբայ ճարտարապետաց մէկն
ալ Կեսարիոյ վանուցը և վիճակին վերատեսուչ
(միւթիւլի) գտնուած ըլլալով, աննահանջելի
պարտք մը սեպած են Կեսարիոյ ամէն մէկ ազգա-
յին գործերուն նեցուկ և պաշտպան կենալու և
անոնց զարգացմանը միշտ օգնելու . . . որոնց
վրայօք աւելի բացայայտ և մի առ մի խօսելը պա-
տիւնուն կը գտնուի . ինչպէս այս Սամիկոնեան ըն-
կերութեան մասին ալ :

Սահտեսի Կիւլպէկ Սիւստեան :
* * * *

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Լիւի Սիւրբաղի Բիւրճի վերաբերեալ գործողութիւն-
ներու նախնի օգնական Սիւրբաղի Բիւրճի Քաթարի
« լիւի Բիւրճի-Սիւստեան Կաթարեան-Պօղոս Գէ Քա-
թարեան հասարակելով պարբեր ծանուցանել որ ամեն
շաբաթ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը կ'սկսեն
Եփեսոսի միջոցով երեւոյթանալի նախ ամեն երկուշա-
բթի երեւոյթանալի իր հայրենի երկրէն իջելու : Լիւ յայտնէ ալ որ
ասանց սառն ընդունելու պիտի նայի աղապարտ : Այս մար-
տը (Լիւի) պալատին ձեռք Պէլլեան տուաւ օտարաբ
ըսուած գործը կը կենայ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԻՏՊԱՐԱՆԻ ԳՈՒԿԱՆՈՒՄԻ ՄԻՆԻՍՏԵՐՆԵՐՆԵՐ

1 Ստորագրութիւն հին Հայաստանի երես 169 .
2 Տես նաեւ Հայաստանի լրագիր երբոր տարի թիւ 14 - 119 .
3 Տես Հայաստանի լրագիր (անդ) :
4 Ազգին մէջ նիւթական հարստութիւնը որչափ շատ ըլլայ՝ այն-
չափ բարոյականին ալ միջոցները կ'եւեղայ, Կիւլպէկեան մեծարու-
մահտեսի Սեթեան աղան գիտուն չէ, բայց միանգամայն ուսումնասէր
է և հայրանաւոր, և իր ուսումնասիրութիւնը և հայրենասիրութիւնը
ի գործ դնելու միջոց մը եղած է իր նիւթական հարստութիւնը բայց
վերջին պար ամենայնի երկուքը մէկ տեղ ունենալն է գովելին . . .